ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՊԱՐՆՈՒ
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Մ.ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

2024 – 2029 թթ.

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

1) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Կրթական կարիքների նկարագրությունը

1.2 Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին.

1.3 Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին

2) ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

2.1 Հաստատության շենքային պայմանների վերլուծություն

2.2 Հաստատության նյութատեխնիկական բազայի վերլուծություն

2.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն

2.4 Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի,կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

2.5 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը

2.6 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացումը

2.7 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը

2.8 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծությունը

2.9 Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծությունը

2.10 Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը

ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

- Զարգացման ծրագրի նպատակը , խնդիրները
- Զարգացման ծրագրի ակնկալվող արդյունքները
- Զարգացման ծրագրի ֆինանսավորման աղբյուրները
- Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունները և միջոցառումները
- Զարգացման ծրագրի կատարման պատասխանատուները
- Զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշները
- Զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը
- Զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

3) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

3.1 Կրթության որակի և առաջադիմության վրա ուսումնադաստիարակչական աշխատանքների ազդեցության գնահատման չափանիշները

3.2 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի գնահատման չափանիշները

3.3 Աշխատակազմի արժեվորման, խրախուսման եվ ինքնակրթության միջավայրի ձեվավորման գնահատման չափանիշները

3.4 Դպրոց-համայնք կապերի, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցության, արտադպրոցական և երկարօրյա ուսուցման գնահատման չափանիշներ

3.5 Հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման գնահատման չափանիշները

4) ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

ՆԱԽԱԲԱՆ

2000թ.-ից մինչև օրս հանդիսանալով ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մ.Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոցի անգլերենի ուսուցիչ՝ 2024-2029թթ. զարգացման ծրագիրը մշակել եմ հաշվի առնելով դպրոցում առկա հիմնախնդիրները, ուսուցիչների, սովորողների և ծնողների առաջարկներն ու մտահոգությունները, ինչպես նաև առաջնորդվել եմ հանրակրթության ոլորտը կարգավորող իրավական փաստաթղթերով: Ծրագրում ներկայացված ինֆորմացիայի աղբյուր է հանդիսացել դպրոցի «Ներքին գնահատումը» և դպրոցի կողմից տրամադրված ինֆորմացիան:

Դպրոցի զարգացման ծրագիրը ներկայացված է ըստ ԴԶԾ-ին ներկայացվող ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022թ.-ի սեպտեմբերի 22-ի N 35-Ն հրամանի պահանջների՝ պահպանելով յուրաքանչյուր բաղադրիչի առկայությունը, սակայն կառուցվածքային այլ մոտեցմամբ: Դպրոցի գործունեությունը՝ իր համապատասխան ենթակետերով, ներկայացված է բովանդակության առաջին կետում: Երկրորդ կետում ներկայացված են իրավիճակի վերլուծությունը. ուժեղ և թույլ կողմերը և յուրաքանչյուր վերլուծությունից հետո ձևակերպված են դրանց համապատասխան նպատակները, խնդիրները և վերջիններիս կատարմանն ուղղված բաղադրիչները, գնահատման չափանիշները: Երրորդ կետում ներկայացված են ԴԶԾ-ի արդյունքների գնահատման չափանիշները իրենց ենթաբաղադրիչներով: Իսկ չորրորդ կետում ներկայացված են հնարավոր ռիսկերը մեղմող գործողությունները: Հինգերորդ կետում ներկայացված են վերահսկողության մեխանիզմները:

Վերլուծությունները կատարված են իրական փաստերից ելնելով, իսկ նպատակների ձևակերպումները արված են իրատեսական և հնարավորությունների սահմանները հաշվի առնելով:

ԴՊՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ



1895-96-ին կառուցված դպրարանի շենքը, որ հետագայում դարձավ Խորհրդային առաջին դպրոցի շենքը գյուղում: (Տանիքը հետո է փոխված):

Խորհրդային առաջին դպրոցի շենքը



Տեր Վահրամի փունը, որ 1929-ից եղել է դպրոցի շենք: Տանիքը փոխվել է ավելի ուշ:

1929թ. դպրոցի շենքը

1988թ.-ի երկրաշարժից ավերված դպրոցի շենքը

1996թ.-ին կառուցված դպրոցի շենքը, որը գործում է մինչև օրս

Հաստատության անվանումը, համարը՝

ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնու ակ. Մ.Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

Հաստատության հասցեն՝

ՀՀ Լոռու մարզ, գ. Մեծ Պարնի, 1-ին փողոց, 21

Շենքը՝ *տիպային, երկհարկ*

Մակերեսը՝ 2.945(հա)

Կադաստրային ծածկագիրը՝ 06-075-0044-0007

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական թիվ 18072014-06-0012

Վկայական՝ N 13122023-06-0010, **գաղտնաբառ՝** VAZXHKAW8K5E

Հաստատության հեռախոսահամարը՝ 025562001

Էլ. հասցեն՝ metsparni@schools.am

Լիցենզիայով սահմանված տեղերը՝

Տարրական՝ 71

Հիմնական՝ 115

Միջնակարգ՝ 73

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՀԻՄՆԱԿԱՆ հանրակրթական
(ծրագրի անվանումը)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0459

Սույնով վավերացվում է, որ
«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մ. Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)
ՀՀ Լոռու մարզ գ. Մեծ Պարնի
(գտնվելու վայրը)
ՀՀ Լոռու մարզ գ. Մեծ Պարնի
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Հիմնական հանրակրթական
(ծրագրի անվանումը)

հանրակրթական ծրագիր

ՂԵԿԱՎԱՐ (ստորագրությունը) *Ա. Աշոտյան* (անունը, ազգանունը)

Կ.Տ. «15» *հուլիսի* 2011 թ.

Անժամկետ
(լիցենզիայի գործողության ժամկետը)

Մեծ Պարնի գյուղը ունի հին, հարուստ ինչպես նաև հիշարժան պատմություն։ Մեծ Պարնի գյուղի գրագիտության ուսուցման մասին ստացած տեղեկությունները վերաբերում են 19րդ դարի II կեսին։ Գյուղացիների համար՝ որպես մշակույթի օջախներ, ծառայել են սրբավայրերը, որոնք քիչ չեն եղել Պարնիի տարածքում ,և դեռևս այսօր էլ մի քանիսը պահպանվում են ։ Սուրբ Հովհաննեսը՝ Փամբակի լեռներում,իսկ Սուրբ Սարգիսը՝ Պարնի բերդի մոտ։ Նույն ժամանակաշրջանում համայնքի նախաձեռնությամբ գյուղում կառուցվում է դպրոցի I շենքը։ Մեծ Պարնու դպրոցի մասին հիշատակել է Գրիգոր Արծրունին Թիֆլիսում հրատարակվող «Մշակ» թերթում, պատմելով ծխական դպրոցի շինության և ներսում ուսում ստացող երիտասարդների մասին։

1906 թվականին մեծպարնեցիները որոշում են պաշտոնական ծխական դպրոց բացել՝ կաթողիկոսից ստանալով թույլտվություն։

Չնայած 1988 թվականի դեկտեմբերի 7-ի ահեղ երկրաշարժից դպրոցը հիմնովին փլուզվել է, սակայն կրթությունը չի ընդհատվել և շարունակվել է փայտաշեն տնակներում։

1996թ.-ին կառուցվում է նոր դպրոց և անվանակոչվում է ակադեմիկոս Մհեր Մելքոնյանի անվամբ։ Դպրոցը գործում է մինչ այսօր։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՄՀԵՐ ՄԵԼՔՈՆՅԱՆ
1920-1996թթ.

1) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Կրթական կարիքների նկարագրությունը

ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մ.Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոցի 2024-2029թթ. զարգացման ծրագիրը կազմելիս սովորողների կրթական կարիքների նկարագրության նպատակով առաջնորդվել եմ «Կրթության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև դպրոցում առկա հիմնախնդիրները հաշվի առնելով:

Ըստ «Կրթության մասին» ՀՀ օրենքի, հոդված 11, մաս 2-ի `

Կրթության բովանդակությունն ապահովում է.

1) սովորողների աշխարհաճանաչման ձևավորումը գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին (աստիճանին) համապատասխան.

2) սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը.

3) հասարակության կատարելագործումը և ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը.

4) հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը:

Հաշվի առնելով կրթության բովանդակության վերը նշված բաղադրիչները, դպրոցն իր գործունեությունը պետք է ծավալի հանուն սովորողների մտավոր, ֆիզիկական և հոգեկան զարգացմանը, որպես հասարակության կատարելագործման նախապայման: Նպատակաուղղված նման գործունեությունը անհնար է դարձնել իրականություն, եթե հաշվի չառնենք դպրոցում առկա հիմնախնդիրները, դպրոցի հնարավորությունները և մի շարք խանգարող և նպաստող հանգամանքները:

Դպրոցուում առկա իրավիճակի վերլուծության արդյունքում, սովորողների, մանկավարժների և ծնողների հետ հանդիպումների ընթացում, ինչպես նաև

դպրոցում դասավանդելու և ներքին կյանքը տարբեր տեսանկյուններից դիտարկելու արդյունքում ձևավորվել է նաև մի շարք այլ կրթական կարիքներ.

Դպրոցում սովորողների և աշխատակազմի համար ֆիզիկական, բարեյահոգեբանական, զարգացնող և մոտիվացնող առողջ միջավայրի առկայություն:

Հանրակրթական պետական ծրագրերի, չափորոշիչների հիման վրա իրականացվող կրթության ապահովում, սովորողների մոտ ձևավորելու և զարգացնելու ինչպես գիտական գիտելիքներ, այնպես էլ բազմաթիվ կոմպետենցիաներ:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ինչպես ֆիզիկական, այնպես էլ որակյալ կրթական պայմանների ապահովում:

Բազմակարծիք, ներառական և մասնակցային միջավայրի ստեղծում և պահպանում:

Հալածանքի, օտարման և բուլլինգի այլ դրսևորումների կանխարգելիչ աշխատանքների իրականացում:

Մանկավարժական կադրերի մասնագիտական որակների բարձրացմանն ուղղված գործունեության իրականացում:

ՏՀՏ-ի միջոցով կրթության որակի բարձրացման նպատակով, դպրոցի նյութատեխնիկական բազայի համալրում:

1.2 Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին

ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մ.Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոցի 2024-2029թթ. զարգացման ծրագրի հիմքում ընկած են ՀՀ կրթական քաղաքականությանն ուղղված հիմնական դրույթները:

Դպրոցն իր հավաքական իմաստով միտված է նպաստելու պետության կողմից կրթական քաղաքականության իրականացմանը: Այդ իմաստով կարևոր է ուղղորդվել և դպրոցի գործունեությունը ծավալել հանուն պետության և հասարակության շահերի և իրավունքների պահպանմանը: Ներկայումս կատարվում են բազմաթիվ բարեփոխումներ, որոնք ուղղված են կրթության որակի բարձրացմանը, հասարակության և յուրաքանչյուր անհատի կրթական կարիքների բավարարմանը: Հանրակրթության նպատակների իրականացումը դպրոցի գլխավոր գործառույթներից է և դրա իրականացումը պետք է լինի շղթայական տարբեր օղակների հետ համագործակցության արդյունքում: Դրան է ուղղված նաև նոր Հանրակրթության պետական չափորոշիչների պահանջներին և վերջնարդյունքներն համապատասխան կրթության և դաստիարակության իրականացումը:

Անհնարին է կղզիացած կարգավիճակով հասնել ցանկալի արդյունքների և դպրոցի նպատակների իրականացումը ապահովել համապատասխան պետության կրթական քաղաքականությանը: Կարևորելով նորարարական մոտեցումներն ու կրթության ոլորտում բազմաթիվ բարեփոխումները, անհրաժեշտ է հետևողականորեն և իրազեկված գործունեության շնորհիվ կազմակերպել և իրագործել որակյալ կրթություն ստանալու սովորողների իրավունքը՝ համապատասխան ոլորտը կարգավորող մի շարք իրավական փաստաթղթերով:

Դպրոցում առկա ուսումնադաստիարակչական, կրթական, վարչական, ֆինանսական հարցերի լուծումը պետք է իրականացվի համաձայն՝

- *ՀՀ Սահմանադրության*
- *ՀՀ «Կրթության մասին» օրենքի*
- *ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի*
- *Հանրակրթության պետական չափորոշչի*
- *ՀՀ «Երեխայի իրավունքների մասին» օրենքի*
- *ՀՀ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի*
- *ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի*
- *ՀՀ Աշխատանքային օրենսգրքի*
- *ՀՀ «ՊՈԱԿՆ»-ների մասին օրենքի*
- *ՀՀ «Գնումների մասին» օրենքի*
- *ՀՀ պետական ուսումնական հաստատության ՊՈԱԿ-ի Օրինակելի կանոնադրության*
- *Հանրակրթության ոլորտը կարգավորող մի շարք այլ փաստաթղթերի:*

1.3 Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին

ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մ.Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոցի 2024-2029թթ. զարգացման ծրագիրը մշակված է հաշվի առնելով հաստատության ենթակառուցվածքների, մարդկային ռեսուրսների և ներուժի հնարավորությունները, առավելագույնը իրատեսական նպատակների ձևավորման և դրանց կյանքի կոչմանն ուղղված գործողությունների նպատակով:

Դասակարգել և ստացել ենք հետևյալ բաղադրիչները.

- ***Դպրոցի շենքային պայմանները***
- ***Մարդկային ռեսուրսներ***

Այս ենթակետում ներկայացրել ենք վերը նշվածների քանակական վերլուծությունը, իսկ առավել մանրամասն որակական վերլուծությունը ներկայացրել ենք դպրոցի զարգացման ծրագրի բովանդակության երկրորդ գլխում իրավիճակի վերլուծություն կատարելիս:

ԴՊՐՈՑԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Տեսակը	Քանակը
Առանձնասենյակներ	2
Դասասենյակներ	12
Համակարգչային սենյակ	1
Նախնական զինպատրաստվածության սենյակ	1
Ջենքի պահեստ	1
«Արմաթ» լաբորատորիայի սենյակ	1
Սպորտդահլիճ/ հարմարեցված սրահ	1
Բացօթյա սպորտհրապարակ	1
Ճաշարան	1
Գրադարան	1
Սանհանգույց	10

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Տարածքը	Ջռուցման ձևը	Ջերմաստիճանը/ C-ով	Ջեռուցման ժամերը
Դասասենյակներ	Լոկալ	20^0	շուրջօրյա
Ուսուցչանոց	Լոկալ	19^0_20^0	շուրջօրյա
Ճաշարան	Լոկալ	20^0	շուրջօրյա
1-ին հարկի միջանցքներ	Լոկալ	18^0	շուրջօրյա
Զուգարաններ	Լոկալ	18^0	շուրջօրյա

ԴՊՐՈՑՈՒՄ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ

Դասարանները	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	Փոփոխությունների դինամիկան
1-ին դասարան	1	1	
2-րդ դասարան	1	1	
3-րդ դասարան	1	1	
4-րդ դասարան	1	1	
5-րդ դասարան	1	1	
6-րդ դասարան	1	1	
7-րդ դասարան	1	1	
8-րդ դասարան	1	1	
9-րդ դասարան	1	1	
10-րդ դասարան	1	1	
11-րդ դասարան	1	1	
12-րդ դասարան	1	1	
Ընդամենը	12	12	Փոփոխություն չկա

Տվյալներ դասասենյակներում սեղան-աթոռների դասավորվածության վերաբերյալ

Դասասենյակի համար	Դասասենյակի մակերեսը(քմ)	Սեղան-նստարանների դասավորվածության ձևը (շարքերով, շրջանաձև, Т-աձև, П-աձև, խառը)	Սեղան-նստարանների թիվը
Դասասենյակ N1	54 քմ	շարքերով	13
Դասասենյակ N2	54 քմ	շարքերով	13
Դասասենյակ N3	54 քմ	շարքերով	18
Դասասենյակ N4	54 քմ	շարքերով	13
Դասասենյակ N5	74 քմ	շարքերով	10
Դասասենյակ N6	54 քմ	շարքերով	11
Դասասենյակ N7	54 քմ	շարքերով	10
Դասասենյակ N8	54 քմ	շարքերով	14
Դասասենյակ N9	54 քմ	շարքերով	10
Դասասենյակ N10	30 քմ	շարքերով	5
Դասասենյակ N11	40 քմ	շարքերով	5
Դասասենյակ N12	40 քմ	շարքերով	8

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԹԻՎՆ ԸՍՏ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ

Դասարանները	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	Փոփոխությունների դինամիկան
1-ին դասարան	21	20	Նվազում
2-րդ դասարան	33	21	Նվազում
3-րդ դասարան	21	33	Աճ
4-րդ դասարան	19	21	Աճ
5-րդ դասարան	19	19	Հաստատուն
6-րդ դասարան	18	20	Աճ
7-րդ դասարան	18	18	Հաստատուն
8-րդ դասարան	18	16	Նվազում
9-րդ դասարան	20	18	Նվազում
10-րդ դասարան	7	8	Աճ
11-րդ դասարան	12	7	Նվազում
12-րդ դասարան	8	12	Աճ
Ընդամենը	214	213	Նվազում

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՍՏՈԳՐԱՄՈՎ



Քանակական վերլուծությունները ցույց են տալիս, որ տարրական դպրոցում ընդունելության ցուցանիշը բավական բարձր է, իսկ հետագայում միջին և ավագ դպրոցում սովորողների թիվը էական նվազում է , ինչը մտահոգիչ է և առիթ է տալիս որակական վերլուծություններ կատարելու: Անհրաժեշտություն կա պարզելու, թե ինչ խանգարող հանգամանքներ են առաջ գալիս, որոնք նպաստում են սովորողների թվաքանակի նվազմանը:

ՏՎՅԱԼՆԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ցուցանիշը	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
Ուսուցիչների ընդհանուր թիվը	23	23
Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը	16.9 135000	16.9 135000

ՏՎՅԱԼՆԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տարիքային ցուցանիշը	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	Փոփոխությունների դինամիկան
Մինչև 30 տարեկան	2	2	Չի փոփոխվել
31-ից 40 տարեկան	12	12	Չի փոփոխվել
41-ից 50 տարեկան	2	1	Նվազել է
51-ից 55 տարեկան	3	3	Չի փոփոխվել
56 տարեկան և ավելի	4	5	Աճել է

ՏՎՅԱԼՆԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՍՏՈԳՐԱՄՈՎ



ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մ.Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական համակազմը

N	Անուն, Ազգանուն	Գործառույթը
1	Սարգիս Փիլոյան	Գործադիր տնօրեն Ժ/Պ
2	Լիլիթ Ահարոնյան	Փոխտնօրեն
3	Գոհար Փիլոյան	Ուսուցիչ
4	Նելլի Քոսյան	Ուսուցիչ
5	Լուսիկ Մխիթարյան	Դասվար
6	Հեղինե Ամիրբեկյան	Դասվար
7	Գայանե Ավագյան	Ուսուցիչ
8	Գրետա Սանթրոսյան	Ուսուցիչ
9	Լաուրա Մկոյան	Ուսուցիչ
10	Սոնա Բարսեղյան	Ուսուցիչ
11	Դիանա Գալոյան	Ուսուցիչ
12	Տիրուն Մելքոնյան	Ուսուցիչ
13	Մարգարիտ Թումանյան	Ուսուցիչ
14	Լևոն Եղիկյան	Ուսուցիչ
15	Գոհար Ուստյան	Ուսուցիչ
16	Աննա Մաթևոսյան	Ուսուցիչ
17	Գագիկ Ասատրյան	Զինղեկ
18	Սուսաննա Սիմոնյան	Ուսուցիչ
19	Գայանե Պողոսյան	Դասվար
20	Սաթենիկ Նազարյան	Դասվար
21	Հրաչ Փիլոյան	ՍԴԱՀ
22	Մարիամ Սվարյան	Ուսուցիչ
23	Գրետա Թադևոսյան	Ուսուցիչ
24	Էմմա Շահբազյան	Ուսուցիչ
25	Հերմինե Ոսկանյան	Ուսուցիչ
	ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ	
	Արագած Դալլաքյան	Պահակ
	Աղասի Մազմանյան	Պահակ
	Ալբերտ Պապոյան	Պահակ
	Արթուր Պապյան	Վերանորոգող
	Անի Աշուղաթոյան	Հավաքարար
	Սոֆիկ Գասոյան	Հավաքարար
	Սոֆյա Աղազարյան	Հավաքարար
	Աննա Բաբոյյան	Խոհարար
	Լիլիթ Ավետիքյան	Խոհարար
	Վարսենիկ Հակոբջանյան	Խոհարար

2) ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

2.1 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅԱՄՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
➢ Շենքը տիպային է, ունի երկու մասնաշենք, երկհարկ է: ➢ Շենքային պայմանները կարող են հնարավորություն տալ լիցենզիայով սահմանված սովորողների քանակը համալրելու նպատակով: ➢ Նախակրթարանը և տարրական դպրոցը ունեն ճաշարան: ➢ Դպրոցի սանհանգույցները հիմնանորոգված են: ➢ Դպրոցն իր ամբողջ մակերեսով ունի նկուղային հատված, այն հնարավոր կլինի օգտագործել որպես ապաստարան: ➢ Դպրոցն ունի իրեն պատկանող մշակահող տարածք, որը հնարավոր կլինի շահագործել:	➢ Դպրոցի տանիքը կարիք ունի հիմնանորոգման: ➢ Դպրոցի որոշ հատվածներ կարիք ունեն հիմնանորոգման, որոշ հատվածներ վերանորոգման: ➢ Դպրոցի երկրորդ մասնաշենքի պատուհանները հին են և ենթակա փոփոխման, իսկ առաջին մասնաշենքի 12-րդ դասարանի պատուհանները ևս հին են: ➢ Դպրոցը չունի բուֆետ, որի անհրաժեշտությունը պարզվել է աշակերտների հետ հանդիպման ընթացքում: ➢ Դպրոցի չունի առարկայական կաբինետներ, լաբորատորիաներ: ➢ Դպրոցը չունի սպորտդահլիճ: ➢ Դպրոցում առկա չէ բուժկետ: ➢ Դպրոցը հարմարեցված չէ ԿԱՊԿՈՒ սովորողների համար, չկա առանձնասենյակ կամ ռեսուրս կենտրոն:

ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Տեսակը	Քանակը	Մակերեսը (քմ)
Առանձնասենյակներ	3	54 քմ
Դասասենյակներ	12	30-74 քմ
Համակարգչային սենյակ	1	54
Նախնական զինպատրաստվածության սենյակ	1	64
«Արմաթ» լաբորատորիայի սենյակ	1	54քմ
Սպորտդահլիճ/ հարմարեցված սրահ	1	80քմ
Բացօթյա սպորտհրապարակ	1	
Ճաշարան	1	150քմ
Գրադարան	1	40քմ
Զուգարան	10	

ՆՊԱՏԱԿ 1
ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ԽՆԴԻՐՆԵՐ

1. Ապահովել սովորողների համար անհրաժեշտ ֆիզիկական և բարեկեցիկ միջավայր:
2. Ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջավարի ստեղծման կարիք:
3. Սովորողների առողջության պահպանման խնդիր:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Գնահատել իրավիճակը, տարանջատել առավել առաջնային խնդիրները՝ դպրոցի տանիքը կարիք ունի անհապաղ վերանորոգելու, դասասենյակների հատակները գտնվում են դպրոցի հիմնադրման օրվանից պահպանված վիճակում, ինչպես նաև դպրոցի բուֆետի և բուժսենյակի առկայությունը առաջնային են սովորողների համար:
2. Կազմել կատարվող աշխատանքների համար անհրաժեշտ ծրագիր ներկայացնել համակարգողին և լիզորված մարմնին:
3. Փորձել արտաբյուջետային միջոցներ գտնել ծախսերը կոմպենսացնելու նպատակով:
4.Աշխատանքներն իրականացնել հետևողական ապահովելով դրանց որակը:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ	Դպրոցի հիմնադիր, լիազոր մարմին, դպրոցի կառավարման խորհուրդ, դպրոցի տնօրեն, վարչատնտեսական համակարգող:
ՄԻՋՈՑՆԵՐԸ	Պետական բյուջեից ստացվող միջոցներ, բարերարների հովանավորություն
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ	Պատասխանատուներից ստացված արձագանք, առկա իրավիճակի վերլուծություն
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ	Աշխատանքների ծրագրավորում, ֆինանսական միջոցների նախահաշվի կազմում, հաշվետվությունների ներկայացում շահառուներին:
ՌԻՍԿԵՐԸ	Ֆինանսական միջոցները հնարավոր է անբավարար լինեն աշխատանքները ամբողջական կատարելու նպատակով:
ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑԸ	2024-2029թթ.

2.2 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
➢ Դպրոցն ունի որոշակի քանակի համակարգիչներ և այլ անհրաժեշտ տեխնիկա: ➢ Գրադարանը համալրված է հարուստ գրականությամբ: ➢ ՆԶՊ-ի սենյակը համալրված է անհրաժեշտ ուսումնադիդակտիկ ռեսուրսներով: ➢ «Արմաթ» լաբորատորիան հագեցած է անհրաժեշտ և ժամանակակից տեխնիկայով՝ 8 համակարգիչ, 3D տպիչ, CNC լազերային հաստոց, ռոբոտաշինության հավաքածու: ➢ Առկա են առարկայական քարտեզներ, գլոբուսներ և այլն:	➢ Դպրոցի տեղեկատվական և ժամանակակից պահանջներին համապատասխան տեխնիկան ունի համալրման կարիք: ➢ Դասասենյակներում առկա սեղան-աթոռները բավական հին են և նոր գույքի ձեռքբերման անհրաժեշտություն կա: ➢ Լաբորատորիաների և առարկայական կաբինետների, ռեսուրս կենտրոնի, բուժկետի ստեղծումից հետո, կարիք կլինի դրանք ապահովել համապատասխան պարագաներով և նյութերով: ➢ Ուսումնանյութական ռեսուրսները բավական հնամաշ են, ոչ արդիական՝ քարտեզներ, գլոբուսներ և այլն: ➢ Սպորտդահլիճը ենթակա է գույքով համալրման: ➢ Հանդիսությունների սրահի ստեղծումից հետո, կարիք կլինի այն գույքով համալրելու:

ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ ԱՌԿԱ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԳՐԱԴԱՐԱՆԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	ՏՎՅԱԼՆԵՐԸ
Գրադարանի տարածքը քմ-ով	40
Գրադարանում համակարգիչների թիվը	1
Գրադարարանում կամ ընթերցասրահում նստատեղերի թիվը	5
Գրադարանային ֆոնդում առկա գրքերի (բացառությամբ ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված հիմնական դասագրքերի) ընդհանուր թիվը, այդ թվում	
-գեղարվեստական գրքերի թիվը	1150
-տեղեկատվական գրքերի թիվը (բառարաններ, հանրագիտարաններ, ատլասներ և այլն)	96
-ուսումնամեթոդական գրքերի թիվը	45
-այլ	107
Գրադարանից միջինում ամսեկան օգտվողների թիվը	82

ՆՊԱՏԱԿ 2
ԴՊՐՈՑՈՒՄ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՈՒՄ

ԽՆԴԻՐՆԵՐ

1.Կրթության որակի ապահովման նպատակով համապատասխան առարկայական ուսումնանյութական ռեսուրսների ապահովման խնդիր:
2.ՏՀՏ-ի ներդրման և կիրառման նպատակով նոր սերընդի համակարգիչներով և այլ ժամանակակից տեխնիկայով ապահովելու խնդիր:
3. Դասասենյակներում սեղան-աթոռները նորով փոխարինելու խնդիր:
4. Ձեռնարկատիրական գործունեության նպատակով տեխնիկական միջոցների բացակայության խնդիր:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Կազմել առաջնային անհրաժեշտ ուսումնանյութական ռեսուրսների ցանկ:
2.Կազմել նախահաշիվ, ներկայացնել վարչատնտեսական համակարգողին:
3.Պետական ֆինանսական միջոցներից հատկացնել անհրաժեշտ գույքի և տեխնիկայի ձեռքբերման համար:
4.Դիմել բարերարների գործընթացին աջակցելու նպատակով:
5. Առաջնորդվել «Գնումների մասին» օրենքով գործընթացները հնարավորինս ճիշտ և արդյունավետ իրականացնելու նպատակով:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ	Դպրոցի հիմնադիր, լիազոր մարմին, դպրոցի կառավարման խորհուրդ, դպրոցի տնօրեն, վարչատնտեսական համակարգող:
ՄԻՋՈՑՆԵՐԸ	Պետական բյուջեից ստացվող միջոցներ, բարերարների հովանավորություն
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ	Գնահատել ստացված նյութատեխնիկական ռեսուրսների դերն ու նշանակությունը դպրոցում կրթական միջավայրի ապահովման գործում:
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ	ֆինանսական ռեսուրսների արդյունավետ համակարգում, հաշվետվությունների ներկայացում շահառուներին:
ՌԻՍԿԵՐԸ	Ֆինանսական ռեսուրսների ոչ բավարար լինելու ռիսկ:
ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑԸ	2024-2026թթ.

2.3 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
➢ Դպրոցի կառավարման խորհուրդը միացյալ է՝ Կաթնաջրի Ս. Սեյրանյանի անվան մ/դ-ի հետ : ➢ Դպրոցն ունի կազմավորված ծնողական, աշակերտական և մանկավարժական խորհուրդներ: ➢ Կոլեգիալ կառավարման և խորհրդակցական մարմինները ձևավորվել են համապատասխան կարգի համաձայն և գործում են դպրոցի կանոնադրության և իրենց լիազորությունների սահմաններում: ➢ Ծնողական խորհուրդը ծնողական համայնքի հետ մշտապես աջակցում է դպրոցում առկա խնդիրների լուծման նպատակով տարբեր նախաձեռնություններին: ➢ Մանկավարժական խորհուրդը աշխատում է նվիրված և հանուն սովորողների որակյալ կրթության: ➢ Առկա են նիստերի արձանագրությունները:	➢ Դպրոցը չունի հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդ: ➢ Դպրոցի կառավարման խորհուրդը պասիվ է համագործակցության համար: ➢ Դպրոցի առաջ ծառացած խնդիրների լուծման նպատակով նկատելի չեն կառավարման խորհրդի կողմից իրականացվող միջոցառումներ կամ նախաձեռնություններ: ➢ Աշակերտական և ծնողական խորհուրդները հնարավորություն չունեն հանդես գալ նախաձեռնողականությամբ և ակտիվ գործունեությամբ:

ՄԻԱՑՅԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

N	*Անուն, Ազգանուն*
1	*Աշոտ Ամիրբեկյան*
2	*Լիլիթ Ահարոնյան*
3	*Մանվել Ավագյան*
4	*Մանվել Պապոյան*
5	*Սվետլանա Մազոյան*
6	*Անուշ Մելիքյան*
7	*Թեհմինա Մանուկյան*
8	*Լաուրա Մկոյան*
9	*Մարիամ Փահլևանյան*
10	*Հերմինե Ոսկանյան*
11	*Անդրանիկ Ջոթյան*
12	*Հայկուշ Արզումանյան*
13	*Կարեն Ավետիսյան*
14	*Արայիկ Նիազյան*

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

N	*Անուն, Ազգանուն*	*Դասարանները*
1	*Արաքսյա Բաբայան*	*I*
2	*Էլյա Աշուղաթոյան*	*II*
3	*Նելլի Նազարյան*	*III*
4	*Միրանուշ Հովհաննիսյան*	*IV*
5	*Մարիամ Փահլևանյան*	*V*
6	*Հերմինե Ոսկանյան*	*VI*
7	*Նարինե Զախարյան*	*VII*
8	*Կարինե Պապոյան*	*VIII*
9	*Ալլա Սարգսյան*	*IX*
10	*Հեղինե Ամիրբեկյան*	*X*
11	*Անուշ Ազատյան*	*XI*
12	*Մարիամ Խաչատրյան*	*XII*

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

N	*Անուն, Ազգանուն*	*Դասարաններ*
1	*Գայանե Արզումանյան*	*XII*
2	*Ժենյա Աշուղաթոյան*	*XI*
3	*Անի Քոսյան*	*X*
4	*Նարե Գևորգյան*	*IX*
5	*Անդրանիկ Ավդալյան*	*VIII*
6	*Ալիկ Գաբրիելյան*	*VII*
7	*Յանա Արզումանյան*	*VI*

ՆՊԱՏԱԿ 3

ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԴՊՐՈՑԻ ԿՈԼԵԳԻԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ

ԽՆԴԻՐՆԵՐ

1. Դպրոցի խնդիրների լուծման հարցերում ակտիվ գործունեության ծավալում կառավարման մարմնի կողմից:
2. Մասնակցային ևն բազմակարծիք արժեքների ձևավորման և պահպանման խնդիր:
3. Դպրոցի գործունեության թափանցիկության և հասանելիության ապահովման խնդիրներ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ըստ դպրոցի կառավարման սահմանված կարգի իրականացնել ակտիվ գործունեություն կառավարման մարմնի լիազորությունների իրականացման նպատակով:
2. Դպրոցում առկա հիմնախնդիրների լումծման անմիջական մասնակից դարձնել կառավարման, մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդներին:
3. Կազմակերպել քննարկումներ և հանդիպումներ դպրոցի գործունեությունը առավել թափանցիկ դարձնելու նպատակով:
4. Հաշվի առնել բոլոր առաջարկություններն ու դիտողությունները երկկողմանի վստահության և բազմակարծիք արժեքների զարգացման նպատակով:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ	Դպրոցի տնօրեն, կառավարման,մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդներ:
ՄԻՋՈՑՆԵՐԸ	Մարդկային ռեսուրսներ և ժամանակային միջոցներ:
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ	Նիստերի արձանագրությունների որակական վերլուծություններ, ակտիվության և գործունեության արդյունավետության գնահատում:
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ	Սահմանված կարգով կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների լիազորությունների պարտաճանաչ իրականացման շարունակականության ապահովում:
ՌԻՍԿԵՐԸ	Համակողմանի արդյունավետ աշխատանքների համար ոչ բավարար ժամանակային միջոցներ և համագործակցության եզրեր գտնելու դժվարությունների առաջացում:
ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑԸ	2024-2029թթ.

2.4 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ,ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
➢ Դպրոցը մշտապես ապահովում է համագործակցությունը շահառու և կրթության ոլորտը կարգավորող կառույցների և կազմակերպությունների հետ՝ ԿԳՄՄՆ, ԳԹԿ, ԿՏԱԿ, ՏՄԱԿ, ԿԶՆԱԿ, ԴՇՀ, Լոռու մարզպետարան, ՏԻՄ, ԱԻՆ, ՀՀ Ոստիկանություն, ՀՀ ՊՆ զորամասեր, Շախմատի ֆեդերացիա: ➢ Համագործակցությունների արդյունքում լուծվում են ինչպես ուսումնական և դաստիարակչական խնդիրները, այնպես էլ ուսումնանյութական ռեսուրսների ձեռքբերման հարցերը: ➢ Դպրոցում երբեմն մեկնարկվում են տարբեր կրթական ծրագրեր համագործակցության շնորհիվ: ➢ Դպրոցում գործող նախակրթարան և տարրական դպրոցի երեխաները օգտվում են «Տաք սնունդ» ծրագրից:	➢ Ցավոք դպրոցը չունի համագործակցության փորձ տարբեր կրթամշակութային կառույցների, առավել հարուստ փորձառնություն ունեցող դպրոցների, ԲՈՒՀ-երի, կրթական ակտիվ ծրագրերի մասնակցության: ➢ Դպրոցը Մեծ Պարնի բնակավայրում հանդիսանում է կրթամշակութային արժեք ունեցող հիմնական կառույցներից և այդ իմաստով ունի պասիվ մասնակցություն համայնքում իրականացվող միջոցառումներում: ➢ Դպրոցը հազվադեպ է հանդես գալիս նախաձեռնողականությամբ համագործակցելու նպատակով :

ՆՊԱՏԱԿ 4

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ,ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

ԽՆԴԻՐՆԵՐ

1.Դպրոցի սովորողների կրթամշակութային արժեքների հետ ծանոթացման և ներառման խնդիր:
2.Փորձի փոխանակման և ինքնակատարելագործման խնդիր:
3. Ժամանակակից կրթական ծրագրերի մասնակցության խնդիր:
4. Դպրոց-համայնք-շահառու կազմակերպություններ շարունակական համագործակցության խնդիր:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ակտիվ համագործակցել Լոռու մարզի մշակութային կենտրոնների, քոլեջների և բուհերի հետ, ապահովելով սովորողների կրթական կարիքները, մասնագիտական կողմնորոշումը և ոչ ֆորմալ կրթությունը:
2. ՀՀ ԿԳՄՄՆ-ի մի շարք կրթական ծրագրերում ունենալ մասնակցություն:
3. Շահառու կազմակերպությունների և բարերարների միջոցով իրականացնել տարբեր կրթական ծրագրեր, նպաստելով ոչ ֆորմալ կրթության զարգացմանը:
4. Պահպանել ակտիվությունը համայնքում իրականացվող միջոցառումներին մասնակցություն ցուցաբերելով:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ	Դպրոցի տնօրեն, տնօրենի տեղակալ, ծնողական և աշակերտական խորհուրդներ:
ՄԻՋՈՑՆԵՐԸ	Մարդկային ռեսուրսներ, համագործակցային կարողունակություններ:
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ	Գնահատել և վերլուծել համագործակցության արդյունքում դպրոցի դերի բարձրացումը համայնքում: Սովորողների կարողությունների, արժեհամակրգի և դիրքորոշման որակական վերլուծություններ կատարել:
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ	Հաշվետվությունների ներկայացում յուրաքանչյուր ծրագրի, միջոցառման մասնակցությունից հետո: Հետևել որպեսզի համագործակցությունները լինեն արդյունավետ և նպատակային կրթական ծրագրերին համապատասխան, վերահսկելով նախնական աշխատանքային պլանները:
ՌԻՍԿԵՐԸ	Համագործակցության նպատակով ոչ կոմպետենտության դրսևորում կողմերից:
ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑԸ	2024-2029թթ.

2.5ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
➢ Դպրոցում աշխատող ուսուցիչների տարիքային վերլուծությունը ցույց տվեց, որ մեծամասնություն են կազմում մինչև 40 տարեկանները: Վերջինս մեծ ներուժ է ուսումնական և կազմակերպչական աշխատանքները առավել ակտիվ և նորարարական ձևով իրականացնելու համար: ➢ Մանկավարժական համակազմի մեծամասնությունը իրական նվիրյալներ են և պատրաստ են հանուն երեխաների կրթության և զարգացման իրականացնել ցանկացած նախաձեռնություն և նպաստել սովորողների որակյալ կրթություն ստանալուն: ➢ Ուսուցիչները մասնակցել են ԿԶՆԱԿ-ի կողմից մեկնարկված ՀՊՉ-ի ուսումնասիրման և յուրացման վերապատրաստումներին: ➢ Մանկավարժական համակազմը մշտապես զբաղվում է ինքնակրթությամբ և ինքնակատարելագործմամբ, փորձելով ետ չմնալ արդի մեթոդիկների կիրառումից և մասնագիտական նորություններից:	➢ Ոչ բոլոր մանկվարժներն ունեն համապատասխան վերապատրաստումներ անցնելու հնարավորություններ: ➢ Տեխնիկական միջոցների բացակայության պատճառով, ուսուցիչներից շատերը հնարավորություն չունեն դասերն անցկացնել ինտերակտիվ, ՏՀՏ գործիքների կիրառման և մասնագիտական կարողությունների լայն ծավալի կիրառմամբ: ➢ Տարբեր սեմինարների, գիտաժողովների, կրթական ծրագրերի մասնակցության ցուցանիշը ցածր է: ➢ Ուսուցիչների կողմից նկատվում է պասիվություն կամավոր ատեստավորման գործընթացին մասնակցելու հարցում: ➢ Չունենք «Տարվա լավագույնները» մրցույթին մասնակցություն ցուցաբերած ուսուցիչներ:

ՆՊԱՏԱԿ 5
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

ԽՆԴԻՐՆԵՐ

1. Ուսուցիչներ մասնագիտական հմտությունների զարգացման խնդիր:
2. Ուսուցիչների տարբեր հարթակներում ակտիվ գործունեություն ծավալելու խնդիր:
3. Ուսուցման նորագույն տեխնոլոգիաների կիրառման խնդիր:
4. ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան կրթության ապահովման խնդիր:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կազմակերպել ներդպրոցական և արտադպրոցական սեմինարներ, քննարկումներ ուսուցիչների մասնագիտական որակների ձեռքբերման և զարգացման նպատակով:
2. Ուսուցիչների կամավոր ատեստավորմանը մասնակցելու քանակական աճի գրանցում:
3. Համագործակցել բարձր կրթական վարկանիշ ունեցող դպրոցների ուսուցիչների հետ՝ հաջողված փորձի փոխանակման համար:
4. Գիտական գործունեություն ծավալելու հնարավորությունների ստեղծում երիտասարդ կադրերի համար:
5. ՏՀՏ գործիքներից արդյունավետ օգտվելու նպատակով դասընթացների կազմակերպում մանկավարժական համակազմի համար:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ	Դպրոցի տնօրեն, փոխտնօրեն, մեթոդմիավորումներ, մանկավարժական համակազմ:
ՄԻՋՈՑՆԵՐԸ	Սեմինարների, քննարկումների, համագործակցային կապերի, ժամանակային միջոցների կիրառում:
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ	Գնահատել յուրաքանչյուր գործողության արդյունավետությունը հետադարձ կապի միջոցով և կատարելագործել հետագա գործողությունների կազմակերպումը:
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ	Վերահսկել յուրաքանչյու գործողության կատարման ընթացքը, արդյունքների վերլուծությունը և շարունակականության պահպանումը:
ՌԻՍԿԵՐԸ	Ուսուցիչների կողմից մոտիվացիայի պակաս ակտիվություն ցուցաբերելու և ժամանակ տրամադրելու հարցերում:
ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑԸ	2024-2029թթ.

2.6 ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
➢ Ուսուցիչների մեծամասնությունը պատրաստակամ է կիրառել տարբեր տեխնոլոգիաներ, մեթոդներ դասի ընթացքը հարստացնելու և սովորողներին հետաքրքիր դարձնելու նպատակով: ➢ Դպրոցում ակտիվորեն գործում է «Արմաթ» լաբորատորիա և խմբակին մասնակցող երեխաները նախագծում և ստեղծում են բազմաթիվ ծրագրեր և խաղեր: ➢ Դպրոցում մանկավարժական համակազմը տարբեր նպատակներով և աշխատանքների արդյունավետության նպատակով օգտվում է տարբեր էլեկտրոնային ռեսուրսներից ինչպիսիք են՝ ԿՏԱԿ - https://ktak.am/ , ԿԶՆԱԿ https://kznak.am/ , «Հայկական կրթական միջավայր» պորտալ - https://armedu.am/ , Պաշարների շտեմարան - https://lib.armedu.am/ , ԴՇՀ https://crm.dshh.am/ և այլն: ➢ Ուսուցիչները հետևողական են դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում /emis.am/ -ը համապատասխան ինֆորմացիայի տեղադրման հարցերում:	➢ Որոշ ուսուցիչներ դժվար են յուրացնում, կամ ցանկություն չունեն յուրացնելու նորարարական մոտեցումները, տեխնոլոգիաներն ու մեթոդիակները, ՏՀՏ գործիքների կիրառումը ուսուցման ընթացքում: ➢ ՏՀՏ գործիքների սակավություն ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով՝ համակարգիչներ, ականջակալներ, էլեկտրոնային գրատախտակներ և այլն: ➢ Որոշ ուսուցիչների կողմից մոտիվացիայի պակաս նորարարական մեթոդներ և տեխնոլոգիաներ կիրառելու նպատակով՝ լրացուցիչ ջանքեր և ժամանակ տրամադրելու համար:

ՆՊԱՏԱԿ 6

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԵՎ ՏՀՏ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄՈՒՄ

ԽՆԴԻՐՆԵՐ

1.ՏՀՏ գործիքների ձեռքբերման խնդիր:
2.Նոր մեթոդների, մոտեցումների և տեխնոլոգիաների յուրացման խնդիր:
3. Ուսուցիչների կարողունակությունների զարգացման խնդիր:
4.Սովորողների ուսման նկատմամբ հետաքրքրվածության ցուցանիշի բարձրացման խնդիր:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համագործակցություն ԿԶՆԱԿ-ի և նորարարական մոտեցումներ կիրառող դպրոցների հետ:
2. Մեթոդմիավորումների աշխատանքների ակտիվացում մեթոդական հարցերում ուսուցիչներին աջակցելու նպատակով:
3. ՏՀՏ տեխնոլոգիաների ներդրման նպատակով տեխնիկայի համալրում և արդիականացում:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ	Դպրոցի տնօրեն, փոխտնօրեն, վարչատնտեսական համակարգող, մեթոդմիավորումներ, մանկավարժական համակազմ:
ՄԻՋՈՑՆԵՐԸ	Համագործակցություն, ժամանակի տրամադրում, ֆինանսական միջոցներ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ	Վերլուծել և պարզել ուսուցման որակի դինամիկան նոր մեթոդների կիրառումից առաջ և հետո : Պարզել սովորողների ընդգրկվածության ցուցանիշը նորարարական մոտեցումներ կիրառելուց հետո :
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ	Իրականացնել դասալսումներ, բաց դասեր, ցուցադրական դասեր՝ նոր մեթոդներին ծանոթանալու նպատակով: Հետևել որպեսզի հաջողված մոտեցումները կիրառվեն մշտապես:
ՌԻՍԿԵՐԸ	Ուսուցիչների կողմից ժամանակի տրամադրման խնդիր, ֆինանսական միջոցների սակավություն:
ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑԸ	2024-2029թթ

2.7 ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
➢ Դպրոցի ուսուցչները մասնավորապես 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում դասավանդող բոլոր ուսուցիչները մասնակցել են ՀՊՉ-ի յուրացմանն ուղղված վերապատրաստումներին: ➢ Ուսուցիչները միտված են իրականացնել չափորոշչային պահանջներին համապատասխան գործունեություն: ➢ Ուսուցիչների մեծամասնությունը միշտ նախապատվությունը տվել է կարողունակությունների վրա հիմնված ուսումնական գործընթացի կազմակերպմանը: ➢ Դպրոցի սաները մեծ ոգևորությամբ են մասնակցում չափորոշչային պահանջներին համապատասխան ուսումնական գործընթացին, ակտիվ են նախաձեռնող, ունեն ուրույն դիրքորոշում ներկայացնելու որակներ, մասնակցային և բազմակարծիք արժեքներ դրսևորելու որակներ: ➢ Դպրոցի սաները մեծ ոգևորությամբ են ուսումնասիրում չափորոշիչների հիման վրա կազմված նոր դասագրքերը:	➢ Ուսուցիչների կողմից նոր ուսումնական նյութերը՝ առարկայական ծրագրերը, չափորոշիչները, դասագրքերը, ձեռնարկները, ուղեցույցները ուսումնասիրելու դժվարություններ: ➢ Դժվարություններ են առաջանում գիտելիքակենտրոն ուսուցումը՝ աշակերտակենտրոն ուսուցմամբ փոխարինելու հարցում: ➢ Քանի որ դպրոցում չկան առարկայական լաբորատորիաներ, հագեցած ուսումնադիդակտիկ նյութեր, ապա դժվարություններ են առաջանում ուսուցումը կազմակերպել, որպես կարողությունների և հմտությունների զարգացմանն ուղղված գործընթաց: ➢ Սովորողները առավելապես ստիպված են լինում պասիվ կարգավիճակում գտնվել և չդրսևորվել ակտիվ գործունեությամբ:

ՆՊԱՏԱԿ 7
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ՀԻՄՆՎԵԼՈՎ ՀՊԶ ՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՎՐԱ

ԽՆԴԻՐՆԵՐ

1.Սովորողների մոտ կրթության բովանդակության հիմնական բաղադրիչների՝ գիտելիք, հմտություն, դիրքորոշում, արժեք ձևավորելու և զարգացնելու խնդիր:
2. Ուսուցիչների պարբերաբար վերապատրաստումների իրականացման խնդիր՝ ՀՊԶ-ի պահանջներին համապատասխան կրթություն ապահովելու նպատակով:
3. Կարողունակությունների վրա հիմնված ուսումնական գործընթացի կազմակերպման խնդիր:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մեթոդմիավորումների աշխատանքների իրականացում՝ հիմնված ՀՊԶ-ի պահանջների վրա:
2. Ձեռնարկատիրական ուսուցման իրականացում, սովորողների հմտությունները զարգացնելու նպատակով:
3. Տարաբնույթ խմբակների ստեղծում սովորողների արժեհամակարգի զարգացման նպատակով:
4. Հրավիրյալ մասնագետների կողմից սեմինարների կազմակերպում, ուսուցման արդյունավետության ապահովման նպատակով:
5. Իրականացնել քննարկումներ նոր դասագրքերի, ՀՊԶ-ի ներդրման դժվարությունները հաղթահարելու նպատակով:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ	Դպրոցի տնօրեն, փոխտնօրեն, մեթոդմիավորումներ, ուսուցիչներ:
ՄԻՋՈՑՆԵՐԸ	Ուսումնական նյութեր, ուսուցիչներ, սեմինարներ, քննարկումներ:
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ	Վերլուծել չափորոշչային կրթության որակի արդյունքները ստուգարքների, քննությունների արդյունքները:
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ	Իրականացնել դասալսումներ, բաց դասերի, համակցված դասերի իրականացում, հետազոտական և գործնական աշխատանքների իրկանացում:
ՌԻՍԿԵՐԸ	Ուսումնադիդակտիկ միջոցների բացակայություն, ուսուցիչների գործունեության պասիվություն:
ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑԸ	2024-2029թթ.

2.8 ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
➢ Դպրոցի ուսուցիչները օժտված են մասնակցային և ներառական արժեհամակարգով: Վերջիններս դրսևորվում են միմյանց հետ հարաբերություններում, ինչպես նաև ուսուցիչ-աշակերտ-ծնող հարաբերություններում: ➢ Դպրոցը իրականացնում է ներառական կրթություն հնարավորություն տալով յուրաքանչյուր սովորողի ստանալ որակյալ կրթություն: ➢ Ուսուցիչները սովորողներին հնարավորություն են տալիս դրսևորվել բազմակրծիք և մասնակցային վարքագիծ, նպաստելով նրանց անհատականության ձևավորմանը որպես հասարակության լիիրավ անդամներ: ➢ Ծնողները պատրաստակամ են մասնակցային մոտեցում ցուցաբերել դպրոցում ցանկացած նախաձեռնության հանդեպ:	➢ Դպրոցի կառավարումը իրականացվում է ոչ ժողովրդավարական ոճով, կաշկանդելով աշխատակիցներին, ուսուցիչներին, աշակերտներին և ծնողներին ազատ գործունեություն ծավալելուն: ➢ Դպրոցում բարոյահոգեբանական միջավայրը աննպաստ է որպեսզի ուսուցիչները, ծնողները և աշակերտները կարողանան դրսևորել և ձևավորել բազմակարծիք, մասնակցային արժեքային միջավայր: ➢ Ծնողներին չի տրվում հնարավորություն մասնակցային, բազմակարծիք, ներառական միջավայր ստեղծելու և դրսևորվելու համար: ➢ Հազվադեպ են լինում ծնող-դպրոց համագործակցության արդյունքում համադպրոցական, արտադպրոցական միջոցառումներ: ➢ Սովորողները և ուսուցիչները հիմնականում գտնվում են կատարողի դիրքում և կաշկանդված են նախաձեռնողականություն ցուցաբերելու հարցում:

ՆՊԱՏԱԿ 8

ՁԵՎԱՎՈՐԵԼ ԵՎ ԱՊԱՀՈՎԵԼ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ, ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԱՌՈՂՋ ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

ԽՆԴԻՐՆԵՐ

1.Դպրոցում առկա է մասնակցային, բազմակարծիք կրթական միջավայրի ստեղծման անհրաժեշտություն:
2. Դպրոցում առկա է ուսուցիչների, աշխատակազմի անդամների, աշակերտների համար ինքնադրսևորման և ունեցած ներուժի բացահայտման, դրանք արդյունավետ կիրառման խնդիր:
3. Դպրոցում առկա է սովորողների, աշխատակազմի իրավունքների պահպանման հիմնախնդի:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուսուցիչների, աշխատակազմի, աշակերտների համար ստեղծել նախադրյալներ, որպեսզի կարողանան ինքնադրսևորվել, բացահայտել իրենց կարողությունները, մասնակից լինեն դպրոցի գործունեության իրականացմանը, ունենան դիրքորոշում տարբեր հարցերի շուրջ:
2. Ապահովել բարոյահոգեբանական առողջ կրթական միջավայր համագործակցելով ամբողջ անձնակազմի, աշակերտների և ծնողների հետ:
3. Ստեղծել աշակերտական «Բանավեճի ակումբ», նպաստելով սովորողների բազմակարծիք, մտածելակերպի զարգացմանը:
4. Հնարավորություն տալ ծնողներին հանդես գալ նախաձեռնողականությամբ, մասնակցայնություն ունենան դպրոցի կյանքին և դրսևորեն ակտիվ գործունեություն:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ	Դպրոցի տնօրեն, փոխտնօրեն, դասղեկներ, մանկավարժական համակազմ, սովորողներ, ծնողներ:
ՄԻՋՈՑՆԵՐԸ	Միջոցառումների, կլոր սեղանների, բանավեճերի և սեմինարների իրականացում:
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ	Ուսուցիչների, սովորողների, ծնողների,աշխատակազմի շրջանում հարցումների իրականացում, դրանց վերլուծություն:
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ	Պլանավորած միջոցառումների իրականացման վերահսկողություն, դրանց որակի ապահովման նպատակով, գնահատման չափանիշների կիրառում:
ՌԻՍԿԵՐԸ	Մարդկային ռեսուրսների զբաղվածության վտանգ: Բազմակարծիք միջավայրի չարաշահման վտանգ:
ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑԸ	2024-2029թթ.

2.9 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
➢ Դպրոցի ուսուցիչները վայելում են աշակերտների և ծնողների վստահությունը, սերը և հարգանքը: ➢ Ուսուցիչները միտված են ինքնակրթությամբ զբաղվելու, ինքնակատարելագործվելու: ➢ Դպրոցն ունի հնարավորություններ աշխատակազմի արժևորման, խրախուսման հարցերում:	➢ Դպրոցի աշխատակազմի, ուսուցիչների, աշակերտների համար չկան խրախուսման և արժևորման գործող միջոցներ: ➢ Ուսուցիչների և աշակերտների աշխատանքների մասին իրազեկումն իրականացվում է միայն սոցիալական հարթակների միջոցով: ➢ Դպրոցում չեն իրականացվում միջոցառումներ աշխատակազմի արժևորման, խրախուսման նպատակով: ➢ Կենդանի շփումների, միջոցառումների միջոցով իրազեկում չի կատարվում ծնողական համայնքի, համայնքի հասարակության, շահառու կազմակերպությունների համար: ➢ Աշակերտների առաջադիմության, ձեռքբերումների իրազեկման և խրախուսման նպատակով չկան համապատասխան միջոցներ:

ՆՊԱՏԱԿ 9
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ԵՎ ԱՐԺԵՎՈՐՈՒՄ

ԽՆԴԻՐՆԵՐ

1.Ուսուցիչների ազատ և ստեղծագործական մտքի դրսևորման պայմանների բացակայություն:
2.Աշխատակազմի արժևորման և խրախուսման անհրաժեշտություն:
3. Ինքնակատարելագործման և մասնագիտական որակների բարձրացման մոտիվացիայի անհրաժեշտություն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ներդպրոցական միջոցառումների կազմակերպում ուսուցիչների և հաջողություն գրանցած աշակերտների խրախուսման նպատակով:
2. Ստեղծագործական մտքի զարգացման նպատակով համագործակցություն տարբեր ինտերակտիվ մոտեցումներ ունեցող կազմակերպությունների հետ, սեմինարների կազմակերպում դպրոցում:
3. Հասարակության շրջանում աշխատակազմի դերի բարձրացման և արժևորման նպատակով իրազեկում տարբեր միջոցառումների, հանդիպումների, «Բաց դռների օրեր»-ի միջոցով և այլն:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ	Դպրոցի տնօրեն, փոխտնօրեն,լիազոր մարմին, համայնքի ՏԻՄ ներկայացուցիչներ, բարերարներ, աշխատակազմ, աշակերտներ և ծնողներ:
ՄԻՋՈՑՆԵՐԸ	Մարդկային ռեսուրսներ, ստեղծագործական միջոցառումներ, ֆինանսական միջոցներ:
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ	Հարցումներ աշակերտների, ծնողների շրջանում, արդյունքների վերլուծություն և խրախուսական միջոցների ներդրման հնարավորությունների գնահատում:
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ	Հետևել աշխատակազմի աշխատանքների որակին, համապատասխան խրախուսման և արժևորման նպատակով:
ՌԻՍԿԵՐԸ	Ֆինանսական միջոցների բացակայություն, մրցակցային անառողջ հարաբերությունների առաջացում աշխատակազմում:
ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑԸ	2024-2029թթ.

2.10 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
➢ https://metsparni.schoolsite.am/%d6%86%d5%ab%d5%b6%d5%a1%d5%b6%d5%bd%d5%b6%d5%a5%d6%80/ ում տեղադրված են համապատասխան հաշվետվությունները, կատարված ֆինանսական ծախսերի վերաբերյալ: ➢ Դպրոցի հաշվապահը իր լիազորությունների սահմանում վարում է հաշվապահական հաշվառումը: ➢ Աշխատավարձը տրվում է ճիշտ ժամանակին: ➢ Դպրոցի կոմունալ վճարումները կատարվում են ճիշտ ժամանակին:	➢ Դպրոցը չունի հավելյալ ֆինանսական հոսքեր: ➢ Բարերարները երկար չեն համագործակցում և ֆինանսական միջոցների հատկացումը դադարեցնում են : ➢ Չկան ֆինանսական միջոցների հատկացման կայուն ձևեր որպես հավելավճար կամ խրախուսակն միջոց: ➢ Ուսումնական նպատակներով ֆինանսական ծախսերը բացակայում են: ➢ Միջոցներ չեն տրամադրվում ուսուցիչների վերապատրաստումների մասնակցման, աշակերտների օլիմպիադաների մասնակցության և այլնի համար:

ՆՊԱՏԱԿ 10
ԴՊՐՈՑՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ԽՆԴԻՐՆԵՐ

1. Դպրոցում առկա են շենքային, նյութատեխնիկական և ուսումնական խնդիրներ, որոնց համար անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ:
2. Դպրոցում առկա է լրացուցիչ ֆինանսական միջոցների խնդիր:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դպրոցին պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցների խելամիտ բաշխում դպրոցի խնդիրների լուծման նպատակով:
2. Գրագետ նախահաշվի կազմում :
3. Բարերարների ներգրավում դպրոցում լրացուցիչ ֆինանսական միջոցների հոսք ապահովելու նպատակով:
4. Համագործակցություն վարչատնտեսական համակարգողի, հաշվապահի և լիազոր մարմնի հետ:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ	Դպրոցի տնօրեն, վարչատնտեսական համակարգող, հաշվապահ, լիազոր մարմին, բարերարներ:
ՄԻՋՈՑՆԵՐԸ	Պետական ֆինանսական միջոցներ, արտաբյուջետային ֆինանսական միջոցներ:
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ	Կարիքների գնահատում, նախահաշիվների վերլուծություն:
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ	Վերահսկել ֆինանսական հոսքերի նպատակային բաշխման գործընթացներին, հաշվետվությունների ներկայացում:
ՌԻՍԿԵՐԸ	Ոչ բավարար ֆինանսական միջոցներ դպրոցում առկա հիմնախնդիրների լուծման նպատակով
ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑԸ	2024-2029թթ.

3) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

3.1 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ✓ **ԲԱՑԱՀԱՅՏԵԼ** սովորողների մոտ առկա համընդհանուր ուսումնադաստիարակչական խնդիրները:
- ✓ **ԱՊԱՀՈՎԵԼ** սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացների կազմակերպումը սովորողների իրավունքների և պարտականությունների շրջանակներում՝ կրթության որակի բարձրացման և սովորողների ընդհանուր զարգացման նպատակով:
- ✓ **ՎԵՐՀԱՄԿԵԼ** կրթության որակի ցուցանիշների դինամիկ փոփոխությունները՝ կրթության որակի բարձրացման նպատակով, աշխատանքների կատարելագործման համար:
- ✓ **ԳՆԱՀԱՏԵԼ** սովորողների ցուցաբերած արդյունքները, վերլուծելով ստուգարքների, քննությունների արդյունքները: Ինչպես նաև սովորողների դրսևորած վարքագծի վերլուծություն և ծնողների շրջանում փոխադարձ կապերի վերլուծություն:
- ✓ **ՍԱՀՄԱՆԵԼ** ձևաչափեր հաշվետվությունների ներկայացման նպատակով :

3.2 ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ✓ **ԲԱՑԱՀԱՅՏԵԼ** ուսուցիչների և աշակերտների բազմակարծիք և մասնակցային դիրքորոշմանը խանգարող հանգամանքները:
- ✓ **ԱՊԱՀՈՎԵԼ** բարոյահոգեբանական առողջ , մասնակցային, կրթական միջավայր: Հնարավորություն տալ դպրոցի մարդկային ենթակառուցվածքներին գործել, ստեղծագործել և սովորել մասնակցային սկզբունքներով, ինքնակատարելագործվել և ինքնադրսևորվել , դպրոցը դարձնելով սովորողների և աշխատակազմի համար հաճելի, հոգեհարազատ միջավայր:
- ✓ **ՎԵՐՀԱՍԿԵԼ** դպրոցում տարբեր իրավիճակներում ներառման գործընթացների պատշաճ իրականացումը:
- ✓ **ԳՆԱՀԱՏԵԼ** բազմակարծիք, ներառական և մասնակցային միջավայրի ազդեցությունը կրթության որակի և սովորողների արժեհամակարգի ձևավորման հարցերում:
- ✓ **ՍԱՀՄԱՆԵԼ** գնահատման և վերլուծման ձևաչափեր ներքին գնահատման և հաշվետվությունների նպատակով:

3.3 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ✓ **ԲԱՑԱՀԱՅՏԵԼ** աշխատակազմի խրախուսման և արժևորման համար արդյունավետ ձևերի կիրառումը:
- ✓ **ԱՊԱՀՈՎԵԼ** աշխատակազմի ինքնակրթության նպատակով անհրաժեշտ պայմաններ, իրականացնել սեմինարներ, քննարկումներ մասնագիտական կարողությունների կատարելագործման նպատակով: Համագործակցել առաջավոր փորձ ունեցող կառույցների հետ, երիտասարդ կադրերին խրախուսել հետբուհական կրթություն ստանալու և գիտությամբ զբաղվելու համար:
- ✓ **ՎԵՐՀԱՍԿԵԼ** որպեսզի աշխատակազմի արժևորման և խրախուսման միջոցառումները և գործողությունները լինեն նպատակային և համապատասխան ձևով:
- ✓ **ԳՆԱՀԱՏԵԼ** տարաբնույթ միջոցառումների , խրախուսման ձևերի արդյունավետությունը աշխատակազմի աշխատանքների արդյունավետության որակի բարձրացման հարցում:
- ✓ **ՍԱՀՄԱՆԵԼ** խրխուսման և արժևորման կայուն ձևեր ըստ համապատասխանության:

3.4 ԴՊՐՈՑ-ՀԱՄԱՅՆՔ ԿԱՊԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ԵՐԿԱՐՕՐՅԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ✓ **ԲԱՑԱՀԱՅՏԵԼ** դպրոց-համայնքի, ծնողական համայնքի հետ համագործակցային դժվարությունների հիմնական պատճառները և խուսափել վերջիններից:
- ✓ **ԱՊԱՀՈՎԵԼ** բոլոր կողմերի ակտիվ մասնակցությունը դպրոցի խնդիրների լուծման, միջոցառումների և նախաձեռնությունների իրականացման ընթացքում:
- ✓ **ՎԵՐՀԱՍԿԵԼ** արդյունավետ, նպատակաուղղված գործունեություն ծավալելու գործընթացներին `կրթության որակի, համայնքում դպրոցի դերի բարձրացման և այլ նպատակներով:
- ✓ **ԳՆԱՀԱՏԵԼ** համայնքի, ծնողների դերը դպրոցի գործունեության ընթացքում, ինչպես նաև դպրոցի, սովորողների դերը համայնքի կյանքում:
- ✓ **ՍԱՀՄԱՆԵԼ** որոշակի ձևաչափեր ներքին գնահատման նպատակով, պարզելու իրականացված միջոցառումների և դրանց արդյունավետության ցուցանիշները:

3.5 ՀԱԼԱԾԱՆՔԻ, ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ✓ **ԲԱՑԱՀԱՅՏԵԼ** հալածանքի, օտարման և բռնության դեպքերը, դրանց առաջացման նախադրյալները:
- ✓ **ԱՊԱՀՈՎԵԼ** «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի իրացումը, զերծ պահել երեխաներին ցանկացած տեսակի բռնությունից և հալածանքից, ինչպես դպրոցում, այնպես էլ տանը:Համագործակցել հոգեբանի, ՀՀ ոստիկանության և համապատասխան այլ կառույցների հետ:
- ✓ **ՎԵՐՀԱՍԿԵԼ** դպրոցում առողջ, հարգալից և հանդուրժողական միջավայրի ապահովման գործընթացի իրականացումը:
- ✓ **ԳՆԱՀԱՏԵԼ** ցանկացած միջադեպի պատճառները, դրանց վերացումը և հետագայում դրանց բացակայության արդյունքում ուսումնական միջավայրի արդյունավետությունը:
- ✓ **ՍԱՀՄԱՆԵԼ** ներքին կարգապահական նորմեր, պատասխանատվության ձևեր կանխատեսվող իրավիճակներում հնարավորինս ճիշտ կողմնորոշվելու և գործելու նպատակով:

4) ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յուրաքանչյուր նպատակի իրականացման համար անհրաժեշտ գործողություններն ու միջոցառումները սահմանելիս, հաշվի են առնվել առաջացող հնարավոր ռիսկերը: Վերջիններս մեղմացնելու նպատակով նաև պետք է սահմանել համապատասխան գործողություններ:

Դպրոցի զարգացման ծրագիրը մշակելիս նկատվել է, որ հնարավոր ռիսկերը կապված են մարդկանց, ժամանակի, ֆինանսական և մոտիվացիայի հետ: Հետրաբար այդ ռիսկերը մեղմող գործողությունները պետք է լինեն համապատասխանաբար ուղղված այդ բաղադրիչներին:

Իրականացնել պետական ֆինանսական միջոցների իրատեսկան նախահաշվի կազմում և հնարավորինս բարերարների ներգրավում՝ նախատեսված աշխատանքներն իրականացնելու նպատակով:

Մարդկային ռեսուրսներն օգտագործելիս հաշվի առնել նրանց իրավունքները, չշահագործել նրանց լիազորությունները, ստեղծել բարոյահոգեբանական առողջ, համագործակցային աշխատանքային և կրթական միջավայր:

Կատարել հնարավորինս ժամանակի ճիշտ բաշխում յուրաքանչյուր նպատակի իրականացման համար: Հաշվի առնել մարդկային ռեսուրսների զբաղվածությունը և ժամանակային միջոցների օպտիմալ բաշխում կատարել:

Նպատակների իրականացման համար պարբերաբար իրականացնել խրախուսական միջոցառումներ, արժևորել և բարձրացնել ուսուցիչների և աշակերտների հասարակական դերի ցուցանիշը՝ ապահովել մոտիվացիայի բարձր մակարդակ:

5) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Ուսումնական հաստատության գործունեության, զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները իրկանացվում են արտաքին և ներքին գնահատումների միջոցով: Ինչպես դպրոցի կառավարման խորհրդին պարբերաբար հաշվետվությունների ներկայացմամբ, վարչատնտեսական համակարգողի և լիազոր մարմնի հետ համագործակցության միջոցով իրականացվում է դպրոցի արդյունավետ կառավարում և դպրոցի նպատակների իրականացում:

Դպրոցի ներքին գնահատման և հաշվետվությունների մեխանիզմները պետք է կազմվեն ըստ համապատասխան վերլուծությունների և ձևակերպված նպատակների: Դրանք ենթակա են փոփոխության և լրամշակման, ինչպես հաստատության զարգացման ծրագրի ենթակետերը:

Ստորև ներկայացված են վերահսկողության նպատակով մի քանի աղյուսակների նմուշներ, որոնք օգտագործվում են ներքին գնահատման ընթացքում և հանդիսանում են հիմնական ինֆորմացիայի աղբյուր դպրոցի գործունեության մասին:

Աղյ. 1

Գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Խանգարող հանգամանքներ	Փոփոխություններ և լրացումներ	Այլ նշումներ
1.					
2.					
3.					
…					

Աղյ. 2

Ցուցանիշ	2023-2024թթ.	2024-2025թթ.	2025-2026թթ.	2026-2027թթ.	2027-2028թթ.
Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատություններ ընդունված 12-րդ դասարանի շրջանավարտների թիվը և տոկոսը					
Բուհեր ընդունված շրջանավարտների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի համեմատ					
Սովորողների բացակայությունների թիվը ժամերով՝ ըստ կրթական աստիճանների .					
Ուսումնական տարվա ընթացքում տվյալ հաստատությունից այլ հաստատություն տեղափոխված սովորողների թիվը և տոկոսը ըստ կրթական աստիճանների					
Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների					
Միասնական քննություններին մասնակիցների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի նկատմամբ					
Ավարտական և միասնական քննություններից անբավարար ստացած շրջանավարտների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի նկատմամբ					

Աղյ. 3

N	Հատկացված Ֆինանսական միջոցներ	Սովորողների ուսումնառության նպատակով ծախսված	Ուսուցիչների մասնագիտական որակների զարգացման նպատակով ծախսված	Դպրոցի շենքային պայմանների վրա ծախսված

Աղյ.4

N	Միջոցառումը	Սովորողների մասնակցությամբ կազմակերպված	Ուսուցիչների համագործակցությամբ կազմակերպված	Այլ կառույցների հետ համագործակցության արդյունքում

Աղյ. 5

Ցուցանիշ	2023-2024 ուսն.	2024-2025ուսն.	2025-2026ուսն.	2026-2027 ուսն.	2027-2028ուսն.
Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունների թիվը և ընդունված առաջարկների տոկոսը ներկայացվածի նկատմամբ.					
Ծնողական խորհրդի կողմից տվյալ ուստարում կազմակերպված միջոցառումների՝ հանդեսների, հավաքների, երեկույթների, էքսկուրսիաների, ճանաչողական այցերի, ժողովների և այլնի թիվը					
Ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու և նմանատիպ առաջարկների թիվը					
Ծնողական խորհրդի հանդիպումների հաճախականությունը՝ դրանց թիվը 1 ուստարվա ընթացքում					
Ծնողական խորհրդի կողմից հաստատության ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքներից աջակցություն ստացող սովորողների տոկոսը տվյալ ուստարում					
Սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում ներառված ծնողների տոկոսը.					

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Որպես ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մ.Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոցի ուսուցիչ՝ վստահաբար կարող եմ ասել, որ դպրոցն ունի նախադրայալներ՝ մարդկային ներուժի տեսքով, դառնալու համայնքում լավագույն կրթական կենտրոններից մեկը: Սակայն դպրոցի ընդհանուր շենքային, նյութատեխնիկական միջոցները և բարոյահոգեբանական միջավայրը չեն նպաստում դպրոցի մանկավարժների ամբողջ ներուժի բացահայտմանն ու դրանց կիրառմանը: Վերլուծության արդյունքներից ակնհայտ է, որ աշակերտների դպրոց ընդունվելու ցուցանիշը բավական բարձր է, սակայն այն նվազում է և բավական մեծ թվով աշակերտներ տեղափոխվում են հարևան բնակավայրերում գործող դպրոցներ՝ կրթությունը շարունակելու նպատակով: Այս երևույթի շարունակական բնույթը մտահոգվելու լուրջ առիթ է տալիս:

Ուրախությամբ կարող եմ նշել, որ արդեն որոշ բարերարներ ցանկություն և պատրաստակամություն են հայտնել աջակցելու և դպրոցի կողքին լինելու կրթական և ֆինանսական խնդիրների լուծմաննպատակով:

Գնահատելով Մեծ Պարնի գյուղի գենոֆոնդի բարձր մակարդակը, առաջնորդվելու եմ հետևյալ կարգախոսով՝

«ՄԵՆՔ ՊԱՐՏԱԿԱՆ ԵՆՔ ՄԵՐ ՆԱԽՆԻՆԵՐԻՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ԱՌՋԵՎ»:

Ստեղծագործ աշակերտների հետ նախագծել ենք դպրոցի լոգոտիպը.